Արձանագրություն N 3

<< ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/6>> ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի նոր մանկապարտեզի կառուցման ավարտական (լրացուցիչ) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հրապարակման նիստի

ք. Երևան 25.08.2016թ

ժամը 10:40

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Խոջայան/ գնահատող /

Լ. Մելիքյան/գնահատող/

Գ. Գևորգյան/ բացող /

Ֆ. Սարգսյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. << ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/6>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ <<Սուֆետ>> ՍՊԸ -ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները և մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան

1.2 Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից էլ. համակարգի միջոցով մասնակիցների ներկայացրած հայտերը 25.08.2016թ. գնահատվել են հետևյալ կերպ.

h/h	Մասնակիցների անվանումը	Հայտի գնահատականը
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	Բավարար
2	<<Սուֆետ>> ՍՊԸ	Բավարար
3	<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ	Բավարար
4	<<Բագարանի բարիք>> ՓԲԸ և <<ԹԱԹ>> ՍՊԸ կոնսորցիում	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. << ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/6>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով տվյալ գնման ընթացակարգի 2-րդ արձանագրության 2-րդ որոշումը և սույն արձանագրության 1.2 որոշումը՝ <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/6>> ծածկագրով գնման ընթացակարգին 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվում <<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

3. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 25.08.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

3.2 25.08.2016թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ-ին, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3.3 Հրավերով սահմանված ժամկետում 3.2 կետում նշված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի 2-րդ տեղը զբաղեցնող մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 31-ին ժամը 15:40-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	_____	Ա. Ջանջուղազյան
Անդամ՝	_____	Ռ. Խոջայան
	_____	Լ. Մելիքյան
	_____	Գ. Գևորգյան
	_____	Ֆ. Սարգսյան
Քարտուղար	_____	Ն. Կիրակոսյան